թեան: Ինչ ազգ չէր հետեւում իսլամին, նա համարւում էր պիղծ, զրկոած թէ այս աշխարհի եւ թէ հանդերձեալ կեանքի երանութիւններից, որոնց պատրաստել էր ալլահը միմիայն Մուհամմեդի շիաների համար: Այս պատճառով, մահմեդականը, ոչ միայն ատելութեամբ էր նայում դէպի այլակրօնները, այլ իրան մեղք էր համարում սերտ յարաբերութիւններ ունենալ նրանց հետ: Մահմեդականը չէր ուտում կերակուրը, որ պատրաստոած էր այլակրօնի ձեռքով, նա չէր հագնում հագուստը, որ գործոած էր այլակրօնի ձեռքով. նա իր տան մէջ չէր բանեցնում կարասիք, որոնց արհեստագործել էր այլակրօն մարդը. մի խօսքով, նա պիղծ էր համարում բոլոր արդիւնաբերութիւնը, որ դուրս էր գալիս մահմեդականութեան չպատկանող ազգերի ձեռքից: Նա պիղծ էր համարում եւ այլակրօնների անձը. օրինակ, մի հայ, մի հրէայ, մի ասորի անձրեւային օրերում, թաց հագուստով չէին կարող քսոել մահմեդականին. այս համարւում էր սրբապղծութիւն եւ անզգոյշ յանցաւորը կրում էր իր պատիժը: Ահա այսպիսի եւ դրանց նման շատ խտրութիւններ, որոնց դրել էր մահմեդականութիւնը մուսուլմանների մէջ, — ոչ միայն քրիստոնեաներին եւ հրէաներին ենթարկում էին իսլամի հալածանքին, այլեւ զրկում էին նրանց շահոել իրանց արդիւնաբերութիւնից, եւ վնասում են իրանց տնտեսութեանը: Դա էր գլխաւոր պատճառը հայերի, հրէաների եւ ասորիների աղքատութեան:

Մօլլաները, բացի ռանց ժողովրդին հոգեւոր ուղղութիւն տալուց, կատարում էին եւ չարիաթի գործադրութիւնը, այսինքն, նրանց ձեռքումն էր օրէնքը եւ արդարութիւնը, որ աւանդել էր ալլահը Մուհամմեդի միջնորդութեամբ: Ամէն գործ, թէ քրէական, թէ քաղաքական, վճռւում էր նրանց ձեռքով: Այստեղ եւս այլադաւանները զրկւում էին շատ իրաւունքներից, որ վայելում էին մահմեդականները: Օրինակ, մի քրիստոնեայ ունէ դատաստանական գործ մահմեդականի հետ. գործը քննում է մօլլան. քրիստոնեան իր իրաւունքը հաստատելու համար չէր կարող ներկայացնել վկաներ իր հաւատակցիներից, որովհետեւ քրիստոնեայի վկայութիւնն ընդունելի էր դատարանում այն ժամանակ միայն, երբ նա տոած կը լինէր յօգուտ մահմեդականի, իսկ ընդդէմ մահմեդականի վկայելու նա իրաւունք չունէր: Այսպիսի դէպքերում պահանջւում էր քրիստոնեայից մահմեդական վկաներ. բայց ոչ մի մահմեդական չէր ցանկանայ քրիստոնեայի օգտի մասին վկայել, որովհետեւ այդ կը համարէր իր համար մեղք: Ուրեմն թէ առաջին եւ թէ վերջին դէպքերում քրիստոնեան զրկւում էր վկաներ ներկայացնելուց, եւ, ի հարկէ, տարւում էր գործը, մի այնպիսի դատարանում, ուր գործերը վճռւում էին ըստ մեծի մասին հիմնոելով վկաների ցուցմունքների վրայ: